

Լրատու

Թիւ 18 (Բացառիկ)
Դեկտեմբեր 2010

Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցչի Գրասենեակի



Սիրելի հայրենակիցներ,

Ահաւասիկ դարձեալ կը գտնուինք Նոր տարուայ մը սեմին եւ իւրաքանչիւր անձ, որ ունի պատասխանատուութեան գիտակցութիւն, պահ մը հաշուետուութեան կը նստի ինքն իր անձին հետ, արժեւորելու անցնող տարւան գործունեութիւնը թե՛ անձնական կեանքին մէջ եւ թե՛ ասպարեզին կապակցութեամբ: Սակայն, իմ պարագայիս գոյութիւն ունի կարելոր պարտականութիւն մը եւս, որ յանձն առի մօտաւորապէս հինգ տարիներ առաջ եւ զայն դասեցի իմ պարտաւորութիւններուս հիմնականը: Անձնական կեանքս ու ասպարեզս յաջորդաբար գրաւեցին երկրորդ եւ երրորդ տեղերը:

Ակնարկ մը նետելով մինչեւ օրս լոյս տեսած «Լրատու»ներու հրատարակութեան, որոնց մէջ յիշուած է գործունեութեան մը միայն ամփոփ տեղեկագրութիւնը, հոն կան կարելիութեանս սահմաններէն ներս առաւելա-

գոյն չափով աշխատանք եւ օժանդակութիւն, թե՛ անհատական եւ թե՛ ընդհանրական մակարդակներու վրայ:

Պատահական ու կանխահաս չէր նախանցեալ ամսուայ հայատառ գոյգ թերթերուն՝ «Արծազանգ»ին եւ «Ազատ Ձայն»ին մէջ լոյս տեսած յայտարարութիւնս: Գաղութին մէջ շրջան ընող շշուկները փարատելու եւ շատ մը անձերու ու կողմերու փափաքը դարձեալ թեկնածութիւնս դնելու, առիթը տուին նախօրօք յստակացնելու դիրքս:

Այս թիւով ձեզի կը ներկայացնեմ 2010 թուականի վերջին եռամսեայի ընթացքին տարուած աշխատանքները, ինչպէս դուք ալ կրնաք վկայել, դարձեալ եղաւ աշխոյժ եւ արդիւնաւետ: Կրկութենէ խուսափելու համար, միայն երկու տողով պիտի անդրադառնամ Կիպրոս-Յայաստան մշակութային գետնի վրայ կազմակերպուած ձեռնարկներուն՝ լուսաբանելու համար հետեւեալը: Նմանօրինակ բարձր մակարդակի ձեռնարկներու կազմակերպումը տարին մէկ անգամ, մեր գործունեութեան անբաժանելի մէկ մասնիկն է: Յետեւաբար, ամէն ջանք ի գործ կը դնենք այն մշակութային փոխյարաբերութիւնը վառ պահելու, ինչպէս նաեւ հայ մշակոյթը ծանօթացնելու օտար հասարակութեան:

Արդէն իսկ տեղեակ էք, Յոկտեմբեր 2010- Էն սկսեալ, Կիպրոսի Յամալսարանէն ներս տեղի կ'ունենան Յայերէն լեզուի շաբաթական դրութեամբ դասընթացքներ: Յոյսով ենք, որ այս քայլը հիմնաքարը կը հանդիսանայ ապագային Յայկական ամպիոնի մը ստեղծման՝ օժտուած հարուստ գրադարանով:

Յոս պարտք կը համարեմ նշելու, թէ վերջին տարուայ ընթացքին, գաղութիս երկու հիմնական պատմամշակութային կառոյցներուն անչլութեամբ աշխատանքները՝ Մելգոնեան Կրթական Յաստատութիւն եւ Մակարա-

վանք, կանգ չեն առած ու կը շարունակուին բարձր մակարդակի հանդիպումներով ու տեսակցութիւններով:

Խօսքիս վերջաւորութեան յիշեմ, թէ ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի արտակարգ եւ լիազօր դեսպան Պրն. Գագիկ Ղալաչեան, անցեալ ամիս Կիպրոս ժամանեց երկօրեայ այցելութեամբ, ՀՀ Նախագահ Ն. Գ. Սերժ Սարգսեանի պետական պաշտօնական մակարդակի այցելութեան նախապատրաստական աշխատանքներուն կապակցութեամբ: Նախագահի Կիպրոս այցը կը նախատեսուի Յունուար 2011- ին:

Սիրելիներ,

Շնորհաւորելով ձեր բոլորին Նոր տարին եւ Ս. Ծնունդը, մաղթանքս է, որ միասնաբար թեւակոխենք Նոր տարին նոր տեսլականներով եւ 2011 թուականը ըլլայ յաջողութեան եւ արդիւնաբերութեան տարի մը բոլորիս համար:

Վարդէս Մահտեսեան

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սիրելի Կիպրահայեր,

Հայ Համայնքի Պետական Ներկայացուցիչի պաշտոնավարութեանս հնգամեակը մօտ ատենէն իր աւարտին կը հասնի:

Ինչպէս շատեր կրնան վկայել, այս հինգ տարիները եղան անընդհատ աշխատանքի ու ազգօգուտ ծրագիրներու իրագործման տարիներ:

Գաղութի բոլոր հոսանքներուն հետ գործակցելով հետամուտ եղայ, որ առկայ հարցերը լուծուին համերաշխութեամբ:

Առանց խտրութեան օգտակար հանդիսացայ ինծի դիմող ռեւէ հայրենակիցի, կարելիութեանս սահմաններէն ներս:

Հետամուտ եղայ, որ կիպրահայութիւնը ներկայութիւն ըլլայ երկրի մշակութային-հասարակական կեանքին մէջ՝ մասնակցութեամբ հայրենի արուեստագետներու, միեւնոյն ժամանակ աչալուրջ եւ հետեւողական քայլերով ամէն ջանք ի գործ դրի պահպանելու մեր գաղութի պատմամշակութային արժէք ներկայացնող կառոյցները:

Բժախնդրութեամբ հետեւեցայ մեր կրթական կեանքի հոլովոյթին, որուն բարելաւման համար ծրագիրներս սկսած են պտուղ տալ:

Վերջապէս, հաւատքով, խանդավառութեամբ, յըստակ ու թափանցիկ գործելակերպով լծուեցայ աշխատանքի, որպէսզի կարելիս ընծայեմ մեր հա-

մայնքի բարօրութեան ու յառաջդիմութեան համար: Քննարկելով կատարուած աշխատանքներն ու ձեռքբերումները, ինչպէս նաեւ նկատի ունենալով գաղութի մեծամասնութեան քաջալերանքը, գոհունակութեամբ կը յայտնեմ, թէ որոշած եմ 2011 Մայիսին դարձեալ թեկնածութիւնս ներկայացնել երկրորդ հնգամեակի մը համար, նոյն յառաջադրանքով ու թափով շարունակելու սկսած ազգանուէր պարտականութիւնս:

Անկեղծութեան լաւագոյն մաղթանքներով՝

ՎԱՐԴԳԷՍ ՄԱՅՏԵՍԵԱՆ

Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ
Նոյեմբեր 2010

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Այս տարուայ վերջին եռամսեայի ընթացքին, մեր գրասենեակի աշխատանքները կապուած Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքին (Aliens & Immigration Unit) հետ, եղան բաւական արդիւնաւետ, նկատի ունենալով, որ կեցութեան (Temporary Residence Permits) հրամաններու առաքումը մտաւ իր նախկին ձեւին մէջ: Կեցութեան վերանորոգութեան դիմումները, որոնք ամբողջական էին եւ կը համապատասխանէին օրէնքով հաստատուած պայմաններուն հետ, ստացուեցան երեք ամսուայ ընթացքին:

Իսկ մեզի փոխանցուած վերջին տեղեկութիւններուն համաձայն, Ռուսական հպատակութիւն ունեցող անհատներ, որպէս այցելու մուտք գործելու համար Կիպրոս, յետ այսու կարիքը չունին այցեգիր (visit visa) ապահովելու Մոսկուայի Կիպրական դեսպանատուն ներկայանալով: Անոնք կը ստանան համապատասխան այցեգիր երթեւեկի տոմսակ ապահովող ընկերութեան միջոցաւ:

Հպատակութիւն

Դեկտեմբեր ամսուայ սկիզբը, երկու հայրենակիցներ, մէկը Նիկոսիայէն, իսկ միւսը Լիմասոլէն, ստացան Կիպրական հպատակութիւն, որոնք վերջին տասը տարիներու ընթացքին օրինաւոր բնակութիւն հաստատած էին Կիպրոսի մէջ:

«Փոքրամասնութիւններուն ներդրումը, իրաւունքները եւ պահպանութիւնը Կիպրոսի մէջ» խորհրդածողով
Նախաձեռնութեամբ Արդարադատութեան Նախարար-



րութեան եւ Մարդկային Իրաւանց Պաշտպանի (Ombudsman) գրասենեակին եւ մասնակցութեամբ Կիպրոսի երեք Կրօնական Համայնքներու Ներկայացուցիչներուն, Երկուշաբթի, 11 Հոկտեմբեր 2010ին, Սիկոսիոյ «Զլէօբաթրա» պանդոկին մէջ, առաւօտեան ժամը 9:00էն սկսեալ, տեղի ունեցաւ «Փոքրամասնութիւններուն ներդրումը, իրաւունքները եւ պահպանութիւնը Կիպրոսի մէջ» նիւթով խորհրդաժողովը: Այս խորհրդաժողովը, որ կազմակերպուած էր Եւրոպական Միութեան «Այլազանութիւնը խտրականութեան դէմ» ծրագրի շրջագիծէն ներս, կը վայելէր Պրն. Պետրոս Մարքուի նախագահութիւնը: Ներկայ էին Արդարադատութեան նախարար Պրն. Լուքաս Լուքա, Մարդկային Իրաւանց Պաշտպանի գրասենեակի պատասխանատու Տիկ. Իլիանա Սիքուլաու, երեք Կրօնական Փոքրամասնութիւններու պատկան մարմիններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ պետական անձնաւորութիւններ եւ անհատներ: Առաջին բաժինով խօսք առին երեք Կրօնական Փոքրամասնութիւններու ներկայացուցիչներ Պրն. Աստոնիս Հատոնի-ճուստս, Պրն. Վարդգէս Մահտեսեան եւ Պրն. Պենիթօ Ման-

դովանի: Պրն. Մահտես-
եան, իր խօսքին մէջ շեշ-
տեց Կիպրահայ համայնքի
երախտագիտութիւնը
Կիպրոսի Կառավարու-
թիւններուն ցուցաբերած
երկարամեայ բարեխնա-
մութեան թէ՛ Զայ Եկեղեցւոյ
եւ թէ Զայ մշակոյթի պահ-
պանութեան նկատմամբ,
ինչպէս նաեւ Կիպրացի



հայրենակիցներուն ունեցած եղբայրական մօտեցումն ու
սերտ կապը: Ներկայացուցիչներու խօսքերէն ետք, Փոք-
րամասնութիւններուն մասին ելոյթ ունեցան յաջորդաբար
Դոկտ. Բաթրիք Թորնպէրի, Դոկտ. Անթոնի Մատելլա եւ
Դոկտ. Թիմ Բոթիէ, որոնք տարբեր տեսանկիւններէ դիտ-
ւած արժեւորեցին Կրօնական Փոքրամասնութիւններուն
ներդրումն ու իրաւունքները Կիպրոսի քաղաքական, հա-
սարակական եւ ընկերային կեանքէն ներս ու ընդգծեցին
անոնց պահպանութեան կարեւորութիւնը: Կեսօրուայ
կարճ դադարէ մը ետք, տեղի ունեցաւ գեղարուեստական
յայտագիրի գործադրութիւն, որը ներկայացուց Պետական
Ներկայացուցիչի Խորհրդարանական Գործակիցը՝ Կապ-
րիէլլա Բեթրիտիս: Կիպրահայ համայնքին կողմէ ելոյթ ու-
նեցաւ «Սիփան» պարախումբը, անգամ մը եւս հմայելով
ներկայ հասարակութիւնը:

ՀՀ Խորհրդարանի Նախագահ Յովիկ Աբրահամեանի Պետական-պաշտօնական այց

Կիպրոսի Խորհրդարանի Նախագահ Պրն. Մարիոս Կա-
րոյեանի պաշտօնական հրաւերով, 14-17 Հոկտեմբեր
2010ին, Կիպրոս այցելեց ՀՀ Խորհրդարանի Նախագահ

Պրն. Յովիկ Աբրահամեան, ընկերակցութեամբ իր ազնիւ տիկնոջ ու աւելի քան քսան հոգիւնոց պատուիրակութեան:

ՀՀ Խորհրդարանի Նախագահի փոխադարձ այցելութեան Նպատակն էր զարգացնել միջխորհրդարանական կապերը եւ համագործակցութիւնը երկու պետութիւններուն միջեւ, ինչպէս նաեւ ամրապնդել եւ աշխուժացնել փոխյարաբերութիւնները քաղաքական, տնտեսական եւ մշակութային բնագաւառներու մէջ:



14 Հոկտեմբերի երեկոյեան, ՀՀ Նախագահն ու իր պատուիրակութիւնը, հիւրասիրուեցան Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններու բնակարանը, ներկայութեամբ Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքեպիսկոպոսի եւ Կիպրահայ համայնքի պատկան մարմիններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն:

15 Հոկտեմբերի առաւօտեան, Խորհրդարանի կառոյցէն ներս, Յովիկ Աբրահամեան հանդիպում մը ունեցաւ Կիպ-

րոսի Խորհրդարանի Նախագահ Մարիոս Կարոյեանին հետ, որուն յաջորդեց մամլոյ ասուլիս, իսկ ժամը 10:30ին ան տեսակցեցաւ Զանրապետութեան Նախագահ Ն.Վ. Տիմիթրիս Խրիստոֆիասին հետ, որ հաւաստիացուց, թէ երկու երկիրներու միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնները սերտ են ու բարեկամական:

Նոյն օրը, Զայաստանի Խորհրդարանի Նախագահը իր պատուիրակութեամբ այցելեց Սիկոսիոյ Նարեկ Վարժարանը, ուր ան ջերմ ընդունելութեամբ դիմաւորուեցաւ տնօրէնութեան եւ աշակերտութեան կողմէ, ապա շարունակելով իր շրջապտոյտը, Սիկոսիոյ Կանաչ Գօտիի գիծին մօտ հանդիպեցաւ Սիկոսիոյ Բաղաքապետ Տիկ. Էլէնի Մալրուին հետ:

Կեսօրին, Յովիկ Աբրահամեան պաշտօնական ճաշի հիւրը եղաւ Կիպրոսի Խորհրդարանի Նախագահին, որմէ ետք ան այցելեց Լէֆկարա գիւղը, հանդիպելով Բաղաքապետ Պրն. Անտրէաս Սոշիլօսին հետ:

Շաբաթ, 16 Յոկտեմբերին, ՀՀ Խորհրդարանի Նախագահը իր պատուիրակութեամբ այցելեց Մելգոնեան Կրթական Զաստատութիւն, պտոյտ մը կատարելով դպրոցի ամայացած շրջակայքին մէջ, ապա շարունակելով իր ծրագիրը, ան ուղուեցաւ դէպի Տերինիա գիւղը, ուր հանդիպեցաւ Ֆամակուսթայի Բաղաքապետ Պրն. Ալեքսիս Ղալանոսին հետ:

Յիշենք, թէ բոլոր տեսակցութիւններուն, հանդիպումներուն ու պտոյտներուն ընթացքին, Յովիկ Աբրահամեանին կ'ընկերանար Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան:

Պետական-պաշտօնական մակարդակի հանդիպումներ

Երեքշաբթի, 19 Յոկտեմբեր 2010ին, Կիպրահայ համայնքի Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ

Մարոնիթ եւ Լատին համայնքներու Ներկայացուցիչներուն, տեսակցութիւններու շարք մը ունեցաւ Կիպրական հինգ կուսակցութիւններու կուսակցապետերուն հետ, միասնաբար քննելու Կրօնական Փոքրամասնութիւններու Ներկայացուցիչներու հանգամանքին հետ կապուած հարցեր եւ բարելաման հաւանականութիւնները: Նշենք, թէ ձեռքբերելու համար շօշափելի արդիւնք, երեք Ներկայացուցիչները, քանի մը ամիսներէ ի վեր, լուրջ աշխատանք կը տանին նաեւ Կիպրոսի սահմանադրութեամբ սահմանուած օրէնքը քննարկելով իրաւական գետնի վրայ:

**ՀՀ Զաղաքացիական Ծառայութեան Խորհուրդի
պատուիրակութեան այց
(RA CSC)**

2 Նոյեմբեր 2010ին, եռօրեայ այցով Կիպրոս ժամանեց ՀՀ Զաղաքացիական Ծառայութեան խորհուրդի պատուիրակութիւնը (Republic of Armenia Civil Servants Committee), բաղկացած Խորհուրդի Նախագահ Մանուէլ Բադալեանէն, Գիտական-Մանկավարժական Բաժանմունքի պատասխանատու Գեղամ Սարգսեանէն եւ Համաշխարհային Դրամատան Հանրային Բաժնի Արդիակալացման Նախագիծի պատասխանատու Ահարոն Մկրտչեանէն:

Այս պատուիրակութիւնը իր առաքելութիւնը յաջողութեամբ աւարտեց Կիպրոսի Տնտեսական Նախարարութեան տարբեր բաժանմունքներուն հետ ունեցած հանդիպումներով, որոնց ընկերակցեցաւ Պրն. Մասիս Տէր Բարթոլոմէոսը՝ իր թարգմանական ծառայութեամբ: Իսկ Հինգշաբթի, 4 Նոյեմբեր 2010ի երեկոյեան, անոնք հիւրասիրուեցան Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններու բնակարանը ու կղզիէն մեկնեցան յաջորդ օրը:

Արա Գեորգեանի հիասքանչ ելոյթները՝ Նուիրուած Կիպրոսի Հանրապետութեան 50-ամեակին



Մի քանի ամիսներու վրայ երկարող ծրագրուած ու բժախնդիր աշխատանքին իբրեւ արդիւնք, մեծ յաջողութեամբ իրականացան Կիպրոսի Հանրապետութեան 50-ամեակին նուիրուած Արա Գեորգեանի ու իր Նուագախումբին, ինչպէս նաեւ Կիպրոսի Սիմֆոնիք Նուագախումբին համագործակցութեամբ կազմակերպուած զոյգ ելոյթները, Շաբաթ 20 եւ Կիրակի 21 Նոյեմբեր 2010ին, որ տեղի ունեցան Ստրովոլոսի Քաղաքապետարանի սրահին մէջ: Մեծ էր մեր երախտագիտութիւնը Հանրապետութեան Նախագահ Ն.Վ. Տիմիթրիս Էրիստոֆիասին հանդէպ, որ միայն մի քանի ժամ առաջ վերադարձած ըլլալով Նիւ Եորքէն, Շաբաթ երեկոյեան, իր ազնիւ տիկնոջ ընկերակցութեամբ, ներկայ գտնուեցաւ ելոյթին:

Շաբաթ օրուայ ելոյթին, պաշտօնական ու բարձրաստիճան հիւրերու թիւը կը հասներ մօտ երկու հարիւրի, իսկ Կիրակի օրուանը՝ մօտ վաթսունի, որոնք մինչեւ օրս շնորհաւորագիրներով եւ հեռաձայններով, ելոյթները կը նկա-



Ձախեն աջ.- Տեր եւ Տիկ. Մարիոս Կարոյեան, Տեր եւ Տիկ. Տիմիթրիս Խրիստոֆիաս, Տեր եւ Տիկ. Վարդգէս Մահտեսեան

րագրեն որպէս իրենց յիշողութեան մէջ իւրայատուկ դրոշմ ձգած երազային պահեր: Հիացմունքը զգալի էր բոլոր ներկաներուն մէջ անխըտիր, հրամցուած ծրագիրին երաժշտութեան, երգերուն եւ պարերուն միջեւ ստեղծուած ներդաշնակութեան ու բացառիկ ներկայացումին առնչութեամբ: Հայկական ասանդական նուագարաններով հարուստ երաժշտութիւն, պարեր ու երգեր, միաձուլուած Սիմֆոնիք դասական նուագախումբին հետ, որոնց ետին մեծ պաստառի վրայ կը ցուցադրուէր իւրաքանչիւր կտորի յատուկ պատմականը: Այս բոլորը կը պարտինք մեր սիրելի ու տաղանդաւոր յօրինող Արա Գեորգեանի եզակի արւեստին, որ վերամշակելով ու արդիականացնելով հայկական եղանակները, մեզի պարգեւեց անմոռանալի ու հպարտալի երեկոներ: Իսկ Կարէն Տուրկարեանի նման արհեստավարժ ղեկավարի մը ձիրքերը, անմիջապէս ի յայտ եկան երբ երրորդ փորձէն ետք, հմտութեամբ սրբագրելով մի քանի բացթողումներ, չորրորդ փորձը ամենայն

վստահութեամբ ջնջեց, սիրաշահելով Կիպրոսի Սիմֆոնիք Նուագախումբին համակրանքը, անոնց մօտ յառաջացնելով ինքնավստահութիւն, որոնք հոգիով ու սրտով անսխալ նուագեցին հայկական երաժշտական կտորները:

Մեր անկեղծ շնորհակալութիւնները կը փափաքինք յայտնել Սոփրանօ Սոնա Կարկալոյեանի եւ Թենոր Մարիօս Խարալամպուսի բարձրորակ կատարողութիւններուն, որ դրսեւորեցին «ԱՏԱՆԱ» երգի մեկնաբանութեամբ, Պրն. Բարսի Չարդարեանին ասմունքի բաժինով ընկերակցելուն, Մարի-Լուիզ Գուլյումճեանին սրտահաղորդ ու թրթռուն մեղմիկ ձայնին, ինչպէս նաեւ Լաուտօ նուագող Լարքոս Լարքուի մասնակցութեան համար:



Յատուկ շնորհակալութիւններ «Սիփան» պարախումբի մեր շատ սիրելի պարուսոյց Ժաննա Թահմիզեանին ու պարախումբի բոլոր անդամներուն, ինչպէս նաեւ հայրենի պարախումբի ղեկավար Էլէն Գրիգորեանին ու պարախումբի աղջիկներուն, որոնց անթերի կատարումները իրայատուկ փայլք մը տուին մեր երեկոներուն:



Իսկ մեր սրտագին շնորհակալական խօսքը կը փափաքինք յղել Կիպրահայ գաղութի անդամներուն եւ այլ երկիրներէ ժամանած մեր յարգելի հիւրերուն, որոնք իրենց ներկայութեամբ քաջալերեցին գեղարուեստական այս գեղեցիկ երեկոները, մեզի տալով հոգեկան գոհացում՝ շարունակելու կազմակերպել նմանօրինակ միջոցառումներ:

Հայաստանի խումբը, ելոյթներուն յաջորդող երկու օրերուն ընթացքին շրջապտոյտներ ունեցաւ դէպի Այա Նաբայի եւ Լառնաքայի ծովեզերեայ շրջանները: Երջանիկ, Երախտապարտ ու ամենալաւագոյն տպաւորութիւններով, Երեքշաբթի, 23 Նոյեմբերին, վերադարձան Հայրենիք:

«Կրօնական Փոքրամասնութիւններու Մշակութային Ժառանգութիւնը եւ Իրաւասութիւնները լուծումէն ետք»

Ամսական դրութեամբ տեղի ունեցող հանդիպումներու ծիրէն ներս, Չորեքշաբթի, 24 Նոյեմբեր 2010ին, կազմակերպութեամբ Սլովաքիոյ դեսպանատան եւ երկհամայն-

քային՝ Յոյն Կիպրական եւ Թուրք Կիպրական Նոր Կուսակցութեան, «Լիտրա Փալաս» պանդոկին մէջ, տեղի ունեցաւ համախմբում մը «Մարոնիթ, Հայ եւ Լատին Կրօնական Փոքրամասնութիւններու Մշակութային Ժառանգութիւնը եւ Իրաւասութիւնները լուծումէն ետք» նիւթով, ներկայութեամբ Կրօնական երեք Փոքրամասնութիւններու Ներկայացուցիչներուն:

Կիպրահայ Համայնքի Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան խօսք առնելով, նախ ընդգծեց, թէ Կրօնական Փոքրամասնութիւնները պետք չէ դասուիւն ՐՈՄԱ-ներու կամ ներգաղթողներու շարքին: Հայերը Կիպրոսի մէջ ունին շուրջ 1500 տարուայ պատմութիւն եւ Կիպրոսի սահմանադրութեամբ ընդունուած Կրօնական Փոքրամասնութիւն են: Կիպրոսի Հայ համայնքը 1960 թուականին, կրօնական եւ պատմական ուրիշ տարբերակ չունենալով, ինքնաբերաբար նախընտրեց ընդգրկուիլ Յոյն Կիպրական համայնքէն ներս: Շարունակելով, Պետական Ներկայացուցիչը ըսաւ, թէ Հայ անհատի մը մայրենի լեզուն հայերէնն է եւ ո՛չ թէ յունարէնը, որու պատճառով մեր համայնքի զաւակները յաճախ կը տուժեն երբ առիթը ներկայանայ կառավարական ասպարեզներու տիրանալու, որովհետեւ գոյութիւն չունի այն համակարգը, որ կարենայ հաւասարակշռել այս իրականութիւնը: Գալով Ներկայացուցիչներու հանգամանքին, ան ձեւակերպական նկատեց անոնց դերը եւ անհրաժեշտ նկատեց Կրօնական Փոքրամասնութիւններու Ներկայացուցիչներուն հորհրդարանէն ներս աւելի ազդու մասնակցութեան անյապաղ բարելաւումը:

Պրն. Մահտեսեանի խօսքէն ետք, Երեսփոխանական Գրասենեակի օտար մամլոյ ներկայացուցիչ Պրն. Ալեքսանդր Հատճիլիրան համակարգիչի օգնութեամբ ներկայացուց Կիպրահայութեան պատմականը, նշելով, թէ Կիպրական հարցի լուծումը պիտի նպաստէ անոնց գոյատեւման ու բարօրութեան:

Ձեռնարկներու Ներկայութիւն

Շաբաթ, 6 Նոյեմբեր 2010ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Լառնաքայի Հայ ակումբի վերաբացման առթիւ կազմակերպուած ճաշկերոյթին: Պրն. Մահտեսեան խօսք առնելով շնորհաւորեց վերաբացուած ակումբը ու նորանշանակ վարչութիւնը, յուսալով որ ան կը ծառայէ իր նպատակին, նշելով թէ ակումբ բանալը դիւրին է սակայն պահելը՝ դժուար եւ երբեք պէտք չէ կարեւորութիւն տալ միայն անդամներու քանակին եւ կամ շքեղ կառոյցներուն, այլ տարուած աշխատանքի որակին: Ապա ոգեւորուած օրուայ մթնոլորտէն, ան յարմար նկատեց յայտարարել յաջորդ հնգամեակի մը համար իր թեկնածութիւնը դնելու որոշումը եւ նոյն եռանդով շարունակելու իրեն վստահուած պարտականութիւնը:

Կիրակի, 21 Նոյեմբեր 2010ին, Տեր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Անուանակոչութեան տօնին առիթով մատուցուած Ս. Պատարագին եւ մատաղի օրհնութեան արարողութեան:

Ուրբաթ, 26 Նոյեմբեր 2010ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Կիպրա-Հունգարական Բարեկամական եւ Մշակութային Միութեան կազմակերպած բարեսիրական գեղարուեստական երեկոյին, որ տեղի ունեցաւ Փասիտի սրահին մէջ: Ձեռնարկին հասոյթը պիտի տրամադրուէր Հունգարիոյ երեք շրջաններու կարմիր ցեխի թունաւոր ողողումէն տուժածներուն:

Երկուշաբթի, 6 Դեկտեմբեր 2010ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ «Սփիրոս Կիպրիանու» Հիմնարկի կազմակերպած ձեռնարկին, նուիրուած Կիպրոսի Հանրապետութեան 50-ամեակին, նիւթ ունենալով «Սփիրոս Կիպրիանուի գործունեութիւնն ու ներդրումը»: Հոս տեղին է յիշել Սփիրոս Կիպրիանուի մեծ ներդրումը Հայկական Դատին գծով, այն իմաստով, որ ան առաջին քա-

ղաքական անձնաւորութիւնը հանդիսացաւ, 1965ին ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովէն ներս արժարժելով Հայկական Յեղասպանութեան հարցը ու դատապարտելով ցեղասպանը:

Չորեքշաբթի, 8 Դեկտեմբեր 2010ին, Պրն. Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Կիպրոսի Համալսարանին կազմակերպած «Հասարակական համախմբուածութեան ճանապարհը եւ ոչ կառավարական կազմակերպութիւններուն դերը» նիւթով Գիտական Համաժողովին: Այս ժողովին նպատակն էր, որոնել դասաւանդման աջակցող մեթոտներ նուազեցնելու ընկերային անհաւասարութիւնը եւ քըննել հետախուզական յատուկ աշխատանքի մը արդիւնքները: Յիշենք, որ Նարեկ Վարժարանի Տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեանն ալ կարճ ելոյթ մը ունեցաւ այս համաժողովին:

Երեքշաբթի, 14 Դեկտեմբեր 2010ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Համբերու Դպրոցի Կաղանդի առթիւ կազմակերպած հանդեսին, որպէս Խորհրդարանի Կրթութեան Յանձնախումբի անդամ:

Ուրբաթ, 17 Դեկտեմբեր 2010ին, Պրն. Մահտեսեանն ու տիկինը, ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի Մանկապարտեզի եւ Նախակրթարանի առաջին երկու դասարաններու Կաղանդի հանդեսին, որ տեղի ունեցաւ դպրոցի նորակառոյց մարզասրահէն ներս:

Երկուշաբթի, 20 Դեկտեմբեր 2010ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, ներկայ գտնուեցան Լիմասոլի Նարեկ Վարժարանի Կաղանդի հանդեսին, որ տեղի ունեցաւ դպրոցի սրահէն ներս:

Երեքշաբթի, 21 Դեկտեմբեր 2010ին, Պետական Ներկայացուցիչը եւ իր տիկինը, ներկայ գտնուեցան Կոյրերու դպրոցին մէջ տեղի ունեցած Կաղանդի հանդեսին:

Շաբաթ, 25 Դեկտեմբեր 2010ին, Պրն. Մահտեսեան եւ տիկինը ներկայ գտնուեցան Լառնաքայի Ս. Ստեփանոս

Եկեղեցւոյ Անուանակոչութեան արարողութեան եւ մատաղի օրհնութեան:

Շաբաթ, 25 Դեկտեմբեր 2010ի երեկոյեան, Տեր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, յատուկ հրաւեր ստանալով, ներկայ գտնուեցան Զ.Ե.Մ.ի տարեկան պարահանդեսին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ «Յիլթըն» պանդոկին մէջ:

Շնորհաւորագիր

Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան, 8 Դեկտեմբեր թուակիր յատուկ գիրով մը շնորհաւորեց «Կիպրահայեր» կայքէջի արտօնատեր ու խմբագիր Պրն. Սիմոն Այնճեանը եւ կայքէջի անձնակազմը, թե՛ ԶԶ Սփիւռքի Նախարարութեան կազմակերպած «Սփիւռքի Լրատուամիջոցներու Ամենամեայ Մրցոյթ»ին, որպէս «Լաւագոյն Զայկական Լրատուամիջոց» մրցանակին արժանանալուն եւ թէ Զնդկաստանի «Ազդարար» Զանդեսին կողմէ Շնորհագիր ստանալուն համար, մաղթելով յարատեւ վերելք եւ յաջողութիւն «Կիպրահայեր» կայքէջի ընձեռած նուիրական գործունեութեան:

Տարեկան այցելութիւն բանտարան

Ուրբաթ, 17 Դեկտեմբեր 2010ին, Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, Տեր Մովսիկ Քինյ. Զապէշեանի ընկերակցութեամբ, այցելեց բանտարան եւ մօտէն հանդիպեցաւ հայ բանտարկեալներուն հետ, շնորհաւորելով անոնց Նոր Տարին եւ Ս. Ծնունդը:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ

Վարդգէս եւ Մակի
Մահտեսեաններ
կը շնորհաւորեն
համայն հայութիւնը
Ամանորի եւ Ս. Ծնունդի
գոյգ տօներուն առիթով՝
մաղթելով Կիպրոսին եւ մեր
Մայր Հայրենիքին բարգաւաճում
եւ հիմնախնդիրներու բարուք լուծում:

ԿԻՊՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos
Հեռախօս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42
Ել. Հասցէ office@armenianmp.com
Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia
Հեռախօս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42
Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy